վարուց Սրբոյն, Յոյնք եւ Լատինք, նաեւ ընտիր հեղինակք Յայսմաւուրաց մերոց, Արեւելցին Կիրակոս՝ որ եւ ուղիղ գրէ Կիզիկէ եւ Խորան, նոյնպէս եւ Անաւարզեցին, եւ այլ հին Յայսմաւուրք լաւ եւս՝ Խորայ:– Վասն դրիցն եւ որպիսութեան Խորին անապատի՝ ասէ Ժամանակագիրն, լինել «այժմ անշէն եւ աւերակ, որ հայի ընդ արեւմուտս առօտ (?). զոր ’ի Կիլիկիոյ այժմ Հայք՝ Մեծ-ջուր ասեն, եւ Թուրքն Ուլու-սու կոչեն. եւ ’ի վերայ զլեառն՝ Թէքիրսին կոչեն»: Ծանօթք անուանց գետոյն եւ լերինն (եթէ գուցեն) կարեն հետազօտել զանապատն արժանաքնին:– Յիշէ այլուր եւ զկարգադիրն՝ զՄեղրիկն Գէորգ, ’ի սուրբ Ճգնաւորանոցն եւ ’ի Խորին անապատն յաշխարհիս Կիլիկեցւոց ’ի Սիս. զոր նորոգեաց Թորոս իշխանն՝ որդին Կոստանդեայ. զոր եւ այժմ աւերակ է. եւ ’ի վերայ դրանն գրեաց նա, (այսինքն շինողն ինքն),

Տէր Աստուած ողորմեա Խօշ Թորոսին»:

Զի՞նչ նշանակիցէ մակ անունդ թոռին Ռուբինի, որ եթէ ստոյգ է՝ հարկ է թէ գրեալ էր Խաւշ:

– Հակիրճ յիշատակարան մի աւետարանի գրելոյ յամի 1311, ’ի նմին գրչէ՝ որոյ գրեալ է եւ զՇարականն (նմանատպեալ յէջ 152), պարզագոյն եւս ծանուցանէ զանապատն՝ ’ի Զոր Խորնի, հանդերձ որ ’ի նմայն եկեղեցեաւ, եւ զմիւսոյ վանաց անունն՝ այսպէս. «Ի Զորս Խորնի, ընդ հովանեաւ Սուրբ Տիրամօր եւ Սուրբ Նշանաց, ’ի խցկան միջ, որ է ’ի հարաւակողմն Պերճեր անապատիս, ’ի խնդրոյ սուրբ եւ ընտրեալ կրօնաւոր քահանայի՝ Պետրոսի, ձեռամբ պիտակ անուն քահանայի Կոստ(անդնի) եւ ողորմելի գերւոյ Հեթմնցւոյ»:

154. Ակներ վանք եւ Յովհ. Արքայեղբայր.– Զոր հաւանօրէն ասէի՝ զկալ սորա երբեմն ’ի մենաստանիս յայսմիկ, արդ հաստատէ ինձ վկայութիւն ժամանակակցի նորին եւ գրչակցի. զի ասէ վասն աւետարանի գրելոյ «ձեռամբ Յովհաննու եպիսկոպոսի… ’ի սուրբ ուխտն Ակներ, ուր յոլով ամօք նախ՝ նոցին միաբան էր գրեալ, եւ յոլով արդիւնք անդ արարեալ»: Յետ այսց բանից յաւելու գրիչն, (բայց սխալ իմն կամ պակաս նշմարի յընդօրինակութեանն). «Ի թուականին Հայոց ’ի ՉԼԶ (1287) ’ի մարտի ամսոյ ԺԳ, ’ի սուրբ Քառասնորդացն պահս. որոյ Տէր Աստուած ողորմեսցի. յորոյ ոսկերսն ցօղ կողից կենարարին Քրիստոսի ցօղեսցի.